ԽՍՏՈՐԵՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ ՉԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

17.12.2015 17:04

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը օրեր առաջ՝ դեկտեմբերի 8-ին, դիմել էր Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին հայտնելով, որ Երևան քաղաքի որոշ վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները խոչընդոտում են փաստաբանների կողմից իրենց մասնագիտական գործունեության իրականացմանը՝ չթողնելով վերջիններիս՝ որպես իրենց վստահորդների ներկայացուցիչներ, մասնակցելու հանձնաժողովների նիստերին:

Այսօր՝ դեկտեմբերի 17-ին Փաստաբանների պալատը ստացել է Երևանի քաղաքապետարանի պատասխանը, որտեղ մասնավորապես նշվում է, որ բարձրացված խնդիրը ուսումնասիրվել է Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներում և հայտնում են, որ այն իրավաչափ է և խստորեն հանձնարարվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նախագահներին ապահովել օրենքի պահանջների կատարումը և չխոչընդոտել փաստաբանների գործունեությանը:

Առաջարկվող նորություններ

08.12.2015ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

05.02.2019ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԴԵՊՔԵՐԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

12.02.2019ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })